

ԽՈՐԵՆԱՑԻԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ՆՐԱ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ

Համաշխարհային գրականության պատմության մեջ անվանի գործիչների շարքում առանձնահատուկ տեղ ունի Մովսես Խորենացին, ում նկատմամբ անսահման հետաքրքրությունն ու սերը մշտապես ոգեշնչել են բազմազգ ընթերցողներին: Հատկապես նրա «Հայոց պատմության» գիտական ուսումնասիրությամբ զբաղվել են հայ և օտարազգի բազմաթիվ գիտնականներ՝ բարձր գնահատելով Պատմահոր գլուխգործոցը: Դարերի ընթացքում ստեղծվել է խորենացիագիտական-հայագիտական հսկայածավալ գրականություն, ինչի վկայությունն է ԵՊՀ-ի Հայոց պատմության ամբիոնի նախկին վարիչ (2013-2016 թթ.), պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի (1944-2016) հեղինակած «Մովսես Խորենացի: Մատենագիտություն» գիրքը<sup>1</sup>:

Այս արժեքավոր մատենագիտությունն աչքի է ընկնում մեթոդաբանական յուրահատուկ կառուցվածքով, գրքի պատմության և մատենագիտության միահյուսված համակարգով: Առաջին մասը (էջ 9-42) նվիրված է Պատմահոր երկասիրություններին և բաղկացած է երեք ենթաբաժիններից: Առաջինում ժամանակագրական կարգով նկարագրված են Խորենացու «Պատմություն Հայոցի» բնագրի 18 հրատարակություններ՝ սկսած ամստերդամյան տպագրությունից՝ 1695 թ. մինչև 2003 թ.: Այնուհետև՝ Պատմության բնագրի համաբարբառների 4 տպագիր միավոր, աշխարհաբար թարգմանությունների 14 հրատարակություն (1889-2003 թթ.), ինչպես նաև հայ և օտարազգի հեղինակների այլ լեզուներով կատարված 26 թարգմանական հրատարակություններ՝ ընդգրկելով 1736-2011 թթ.: Այս բաժնում հավելյալ տեղեկություն է տրված ևս 7 այլալեզու (թուրքերեն, գերմաներեն, շվեդերեն, ֆրանսերեն)՝ ոչ պակաս մատենագիտական կարևորություն ներկայացնող հրատարակությունների մասին: Երկրորդ ենթաբաժինը (էջ 43-78) նվիրված է «Պատմություն Հայոցի» առանձին հատվածներին՝ ներառելով 1735-2011 թթ. Կատարված 116 հայերեն և 1723-2001 թթ. կատարված լատիներեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով 48 տպագիր հրատարակություններ: Երրորդ ենթաբաժնում (էջ 79-111) արտացոլված են Խորենացու այլևայլ և նրան վերագրվող երկերի («Աշխարհացոյց», «Գիրք Պիտոյից», «Ալեքսանդր Մակեդոնացու պատմություն», շարականներ, տաղեր, քերականագիտական երկեր, ասույթներ) ավելի քան 143 հայալեզու և օտարալեզու հրատարակություններ՝ տպագրված 1668-2008 թթ.:

<sup>1</sup> Հովհաննիսյան Պետրոս, Մովսես Խորենացի: Մատենագիտություն, Ե.: ԵՊՀ, 2013.- 436 էջ:

Մատենագիտության երկրորդ մասը (էջ 113-370) Մովսես Խորենացու մասին գրականությունն է: Այստեղ, բացի V-XVII դդ. 30 աղբյուրներից, նկարագրված են մինչև XXI 10-ական թվականները լույս տեսած տպագիր գրքերն ու բազմանուն պարբերականներում հրատարակված հոդվածները: Այբբենական կարգով կազմված այդ ընդարձակ ցանկը մեր հաշվումներով (համարակալված չլինելու պատճառով) հասնում է 1767 միավորի: Ընդ որում՝ հայալեզու աղբյուրների քանակը կազմել է 1213 (որից 115 անստորագիր), ռուսալեզու աղբյուրներինը՝ 243 (որից 16 անստորագիր) և այլալեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն) աղբյուրներինը՝ 311 միավոր (այդ թվում՝ 11 անստորագիր):

Պատմագրական տվյալների արժևորումը, սակայն, այսքանով չի ավարտվում. ներածությունում և նշված երկու մասերի համարյա բոլոր էջերի տողատակերում Պ. Հովհաննիսյանը տվել է նաև մոտ 486-ի հասնող մատենագիտական աշխատանքների, գրախոսականների և հոդվածների հղումներ, խորագնին հայացքով նյութերի համադրմամբ և սկզբունքային մոտեցմամբ կատարել է պատմատեղեկատվական, թվական և հայագիտական կարևոր ճշգրտումներ:

Մատենագիտության երրորդ մասը (էջ 373-410) Խորենացու «Պատմություն հայոցի» երկասիրողների կենսագրական բառարանն է, որի շնորհիվ ընթերցողը ծանոթանում է նաև հայ և օտարագրի 26 նշանավոր գործիչների հետ, որոնց դերը մեծ է ոչ միայն հայագիտության զարգացման, այլև պատմահոր Պատմության ուսումնասիրման, գնահատման ու տարածման գործում: Ակնառու է այն փաստը, որ յուրաքանչյուր հեղինակի մասին տրված է անհրաժեշտ գրականություն՝ կազմելով 45 միավոր: Տեղեկատվահաղորդակցական առումով առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև գրքում առանձնացված պարբերականների և տարեգրքերի անվանացանկը (էջ 413-424):

Այսպիսով, ընդհանուր առմամբ շրջանառության մեջ է դրվել խորենացիագիտական շուրջ 2730 միավոր գրականություն՝ տպագրված Ամստերդամում, Վենետիկում, Երևանում, Ս. Պետերբուրգում, Թբիլիսիում, Լոնդոնում, Փարիզում, Կահիրեում, Մոսկվայում, Թեհրանում, Վիեննայում, Լայպցիգում, Նյու Յորքում, Բեյրութում, Կ. Պոլսում, Էջմիածնում և այլուր: Առանց չափազանցության պետք է նշել, որ յուրաքանչյուր աշխարհագրական գրատպական կենտրոնի հեղինակությունը որոշակի աստիճանով կապված է եղել Խորենացու «Հայոց պատմության» տպագրության հետ: Ավելին՝ ցանկացած գրադարանի (թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս) հեղինակությունը նույնպես կապվում է ճանաչողական ու կրթադաստիարակչական լայն նշանակություն ունեցող համանուն պատմությունն ունենալու և սպասարկելու հետ:

Գրքի բովանդակային և վիճակագրական տվյալների համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ունի ոչ միայն հայագիտական անսահման նշանակություն, այլ նաև՝ խորը պատմականություն՝ ընդգրկելով V-XXI դարերը: Ժամանակագրական այդ տեսանկյունից էլ, մեր կարծիքով, գրախոսվող մատենագիտությունը համաշխարհային հայագիտության մեջ՝ խորենացիագիտության զարգացման ու

## ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

---

խորացման ուղղությամբ առայժմ չունի «մրցակից»: Ապագային միտված սույն հրատարակությունն ունի գիտատեղեկատվական և կիրառական լայն նշանակություն՝ հանդիսանալով Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում դասավանդվող «Հայագիտական մատենագիտություն» առարկայի ուսուցման օբյեկտը: